Եւ առաւօտուս Չշի (7 Օգոստ.) գնաց անդ[1]) (Ռէրէ)։
Շաբաթ (8 Օգոստ.)։
Կիրակի (9 Օգոստ.). բարեկենդան Աստուածածնի։ Երեկոյիս Ը-երորդ ժամուս բազում թօփ նետեցին ի վերայ ծովուն։
Բշի (10 Օգոստ.). յայս կոյս եւ յայն կոյս երթեալ գտին և արարեալ են հօճէթ՝ եթէ աքսորեսցեն, և այսու եթէ ոչ լիցին յաղթողք՝ հանցեն ի կենաց։ Զայս լուեալ նմին երեկոյիս ի Սուրբ Նիկողոս (Ռէրէ)։
Գշի (11 Օգոստ.) առաւօտուս եւս ի քարոզն յիշեց կրկին եւ Մարտիրոս վարդապետն ի յԱստուածածին ասացեալ բան թէ Ժողովո՛ւրդք, երանի՛ ձեզ. դուք որ մի մի ըստակ տայք ի թապախն, զոր ածեն յեկեղեցին վասն սիրոյն Քրիստոսի, զայն ահա՛ առեալ տանին տան անօրինացն և զմարդ տան ի հաւատոց հանել և արեանն սպասել. և ել գնաց յԱստուածածնայ։
Կիրակի (16 Օգոստ.) Աստուածածին. անդ արար եւ զնոսին նզովեաց ի պատարագն եւ Ղազարն աստ պատարագ արար եւ կրկին աստ եւ նա նզովեաց։
Բշի (17 Օգոստ.). ի գերեզմանեն ժողովեալ կեսարացոց ժողովրդեանն ի վերայ Ղալֆային և բազումս նախատեալ զնա և զերէցն թէ Քանի՛ քանի զաշխարհս ի մէջ խռովութեան պահէք և զի՞ դու ընդ նոսա խառնիս և հուճէթ հանել ետուր վասն նորա. և նա երդմամբ մեծաւ մազապուրծ եղեալ ի նոցանէ այն օր և դիմեաց ի տուն վաղ։ Եւ ժողովուրդն այն գնացեալ և պատմեալ մէմարին զամենայն՝ ի ձեռանէ նորին։
Եւ այդուցն (18 Օգոստ.) եւս ի չարեացն յայնցանէ գնացեալ և գրեալ ի մեծամեծաց կեսարացոցն Ե և Զ ոգի թէ Այնպէս զօրպայութիւն ունին և զմեզ նեղացնեն. և նա ասէ Ցօր Չշի եկէք։

1) անա.